# ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾԵՄԱՐԱՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

## ԾԵՄԱՐԱՆԸ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ

1821թ. ապրիլի 2-ին Կալկաթայում, հայոց եկեղեցու անմիջական հարևանությամբ հանդիսավորապես բացվեց սփյուռքի ամենահին ուսումնական հաստատություններից մեկը՝ Մարդասիրական ծեմարանը: «Հնդկահայը, ինչպես Մադրասի մեջ, նույնպես և հոս, Կալկաթայի մեջ կրցավ իր կրթական կյանքին տալ իմացական շարժումի այն շունչը, որ պահանջն էր որքան իր արյան բնազդին, նույնքան նաև իր տեղական պետքի, կրթված ժողովուրդի մը հետ արժանապես և հաջողությամբ գործակցիլ կարենալու հարկին», - գրել է Թորգոմ արք. Գուշակյանը:

Շարունակելով գործել ցայսօր, ծեմարանը կոչված էր դառնալու հնդկահայ համայնքի մնայուն և կարևորագույն հաստատություններից մեկը: Ժամանակին այստեղ ուսանելու էին գալիս հազարավոր հայ երիտասարդներ Նոր Ջուղայից և այլ վայրերից: Անցյալ դարակեսին ծեմարանը փայլում էր իր դասախոսական կազմով և սաներով: Մեսրոպ Թաղիադյան, Հովհաննես Ավդալյան, Թադեոս Տեր-Ստեփանյան, Մկրտիչ Էմին և բազմաթիվ այլ անուններ մշտապես կհիշեցնեն ծեմարանի ոսկե դարը:

Սակայն երբեմնի հայաշատ գաղութը, որի թիվը ներկայումս 100-ից ավելի չէ, ծեմարանում ուներ ընդամենը 5 աշակերտ: Մարդասիրական ծեմարանին սպառնում էր փակվելու վտանգը: Սակավաթիվ սաների պատճառով այն կարող էր վաճառվել կամ իր դռները բանալ հնդիկ ուսանողների համար:

Եւ ահա գտնվեց ծեմարանի փրկության լավագույն լուծումը: Ծեմարանի գոյությանը սպառնացող վտանգը կանխելու նպատակով Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն առաջարկեց դպրոցը վերակենդանացնել հայաստանցի ուսանողներով:

Գտնվեցին նաև ծեմարանի պահպանմամբ շահագրգիռ հնդկահայեր, որոնք ի հակակշիռ ծեմարանի հոգաբարձուների խորհրդի, իրապես համոզվեցին, որ լավագույն լուծումը կրթական հաստատությունը Մայր Աթոռին հանձնելն է: Ծեմարանի հետագա ճակատագրի շուրջ ծայր առած ներհամայնքային տարաձայնությունը իր վերջնական լուծումը ստացավ այս տարվա փետրվարի 15-ին Կալկաթայի Գերագույն դատարանում: Գերագույն դատարանի որոշմամբ կատարվեց Մարդասիրական ծեմարանի թերևս երկրորդ վերածնունդը. դպրոցն անվերադարձ կերպով տրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իրավունք և իշխանություն ստացավ տնօրինելու այն իր ցանկացած ձևով:

Եւ ահա այս տարվանից Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ ծեմարանի ուսանողների թիվը կավելանա հայաստանցի 30 առաջին դասարանցիներով: Ծեմարան ընդունվում են 7 տարեկանից և դպրոցի

վերաշխուժացման լավագույն տարբերակ է նկատվել ամեն տարի ճեմարանում 30 աշակերտից բաղկացած նոր առաջին դասարանի բացումը, շնորհիվ որի 10 տարի անց Մարդասիրական ճեմարանն իր 300 աշակերտներով կրկին կդառնա մի մեծ ուսումնական հաստատություն: Այստեղ ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները: Ճեմարանն ունի իր գրադարանը, լողավազանը, սպորտային համալիրը, տղաների և աղջիկների համար նախատեսված առանձին կացարաններ:

Կարևորվում է նաև երեխաների ընտրության հարցը: Հնդկաստան ուսանելու կմեկնեն առաջին հերթին որբանոցներից, ապա՝ գիշերօթիկ դպրոցներից կամ միակողմանի ծնողազուրկ և սոցիալապես խիստ անապահով ընտանիքների երեխաներ: «Ընտրվում են այնպիսի երեխաներ, որոնք այստեղ ապրում են շատ ավելի ծանր պայմաններում, քան կապրեն այնտեղ», - ասում է Մարդասիրական ճեմարանի կառավարիչ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

Ճեմարանի ուսուցման ծրագրերը կհամաձայնեցվեն թե՛ Հայաստանի Հանրապետության և թե՛ Հնդկաստանի ուսումնական ծրագրերի հետ: Ուսուցման հիմնական լեզուն լինելու է անգլերենը: Չնայած դրան մեծ ուշադրություն կդարձվի նաև հայերենին, մանավանդ, որ ճեմարանն ավարտելուց հետո ուսանողները վերադառնալու են Հայաստան: Մայրենի լեզվով ճեմարանում կդասավանդվեն բոլոր հայագիտական առարկաները: Այս առարկաների ուսուցիչները նույնպես լինելու են Հայաստանից: Արդեն կատարվել է հայաստանցի առաջին ուսուցիչների ընտրությունը և ուսուցիչ ամուսիններից բաղկացած երեք ընտանիք մեկ տարի պայմանագրային ժամկետով կմեկնի Հնդկաստան:

Լուծված է նաև Հնդկաստանի բարձրագույն դպրոցներում ուսումը շարունակել ցանկացողների հարցը: Նրանց համար Կալկաթայի հայ համայնքի կողմից ստեղծվել է հիմնադրամ, որը կոչվելու է Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով և որը կապահովի տարեկան 4-5 ուսանողի կրթական ծախսերը Հնդկաստանի համալսարաններում:

Իրապես գտնվել է ճեմարանի փրկության բանալին, և հոչակավոր Մարդասիրականը շարունակելու է իր առաքելությունը՝ ի շահ հայ ազգի և Մայր Եկեղեցու:

*Հ. Մկրտչյան*